REDEMOS

RECONFIGURING EU DEMOCRACY SUPPORT. TOWARDS A SUSTAINED DEMOS IN THE EU'S EASTERN NEIGHBOURHOOD

Քաղաքականության համառոտագիր 3

Չինաստանի դերը ԵՄ արևելյան հարևանության երկրների քաղաքական փոխակերպումներում

Ջուլիա Բադեր

Օգոստոս, 2025

Funded by the European Union

The REDEMOS project has received funding from the European Union's Horizon Europe research and innovation programme under grant agreement No 101061738. The Associated Partner University of Surrey has received funding from UK Research and Innovation (UKRI) under the UK government's Horizon Europe funding guarantee under grant number 10040721. The Associated Partner University of St. Gallen has received funding from the Swiss State Secretariat for Education, Research and Innovation (SERI). Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union, UKRI and SERI. Neither the European Union nor UKRI or SERI can be held responsible for them.

Իրավիճակի նկարագրում

Չինաստանը, թեև դեռևս համեմատաբար նոր դերակատար է, սակայն հասցրել է դիրքավորվել որպես ազդեցիկ խաղացող ԵՄ արևելյան հարևանությունում՝ ի տարբերություն Ռուսաստանի, որը տարածաշրջանում ունի պատմականորեն ձևավորված գերակայություն։ Չինաստանի ներգրավվածությունը ցուցադրում է տնտեսական իր այն հավակնությունները և ռազմավարական պրագմատիզմը, որի առանցքում «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունն է (BRI)։ ԵՄ արևելյան հարևանության երկրները Չինաստանը դիտարկում են ոչ միայն որպես ԵՄ-ին այլընտրանք կազմող տնտեսական ներդրումների աղբյուր, այլև որպես աշխարհաքաղաքական հակակշիռ ռուսական ազդեցությանը։ Այդուհանդերձ, Չինաստանի քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում մնում է անուղղակի և սահմանափակ, ինչը վկայում է Պեկինի՝ որպես գործընկերոջ ոչ լիարժեք հուսալիության մասին, հատկապես տարածքային հակամարտությունների հարցում։

Միևնույն ժամանակ, Չինաստանի տնտեսական ներգրավվածությունը այս վեց երկրներում լուրջ մարտահրավեր է ԵՄ-ի նորմատիվ նպատակների համար, որը հանգեցնում է առևտրային անհավասարակշռությանը և էլիտաների ներգրավմանը, ինչպես նաև խորացնում կառավարման գործընթացներում առկա խոցելիությունը։ Լրատվամիջոցների ազդեցության և կրթական հաստատությունների հետ գործընկերության միջոցով այն առաջ է մղում Պեկինի համար նպաստավոր նարատիվներ և տարածում խոսույթ, որը խաթարում է լիբերալ ժողովրդավարական նորմերը։ Չինաստանը նաև ակտիվորեն տարածում է երկակի նշանակության անվտանգության և վերահսկողության իր տեխնոլոգիաները՝ դրանք դարձնելով մատչելի և առօրեականացնելով ներխուժող հավելվածների օգտագործումը։ Այս տեխնոլոգիաների ներդրումը ստեղծում է դրանք ռեպրեսիվ նպատակներով օգտագործելու ռիսկ։ Ցուցադրելով և գործադրելով իր փափուկ ուժը, ինչպես նաև առաջարկելով առանց պայմանների (օրինակ՝ խիստ բարեփոխումների պահանջների) տնտեսական հնարավորություններ, Չինաստանը ի զորու է մարտահրավեր նետել տարածաշրջանում ԵՄ-ի գործադրած ջանքերին՝ միաժամանակ ամրապնդելով ավտորիտար նորմերն ու միտումները։ Ի լրումն, Չինաստանի դիրքորոշումը Ռուսաստանի ագրեսիայի նկատմամբ էլ ավելի է խաթարում տարածաշրջանային անվտանգությունը, և հետևաբար՝ ԵՄ անդամ պետությունների անվտանգությունը։

Հիմնական եզրակացություններ

• ԵՄ արևելյան հարևանության երկրները ակտիվորեն ձգտում են Չինաստանի քաղաքական և տնտեսական ներգրավվածությանը՝ թե՛ ներդրումների տեսքով, թե՛ ռուսական ազդեցությանը հակակշիռ ձևավորելու նպատակով:
• Չինաստանի տնտեսական ներգրավվածությունը Արևելյան հարևանության երկրներում հիմնականում պայմանավորված է նրա ռազմավարական շահերով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության (BRI) շրջանակում: Մինչ այժմ սա հանգեցրել է չինական ներդրումների սահմանափակ ծավալների և առևտրային անհավասարակշռության աճի, իսկ էլիտաների ներգրավման մեխանիզմները նպաստել են կոռուպցիայի խորացմանը և ներքին կառավարման խոցելիության շահագործմանը: Այնուամենայնիվ, Չինաստանի ազդեցությունը տարածաշրջանում կարող է աճել՝ կախված այն բանից, թե արդյոք չինական ընկերությունները ներգրավված կլինեն Վրաստանի Սևծովյան Անակլիայի նավահանգստի զարգացման մեջ:
• Չինաստանի ավելի լայն նպատակը տարածաշրջանի երկրներին միջազգային կարգի վերաբերյալ իր տեսլականը պարտադրելն է, ինչպես ձևակերպված է, օրինակ, «Ընդհանուր ապագայի գլոբալ համայնք» հայեցակարգում, որը թուլացնում է լիբերալ ժողովրդավարական նորմերն ու արժեքները:
• Չինաստանը չի իրացրել իր ներուժը խաղաղաշինության և հակամարտությունների կարգավորման ոլորտում, ինչի մասին է վկայում նրա երկակի դիրքորոշումը Ռուսաստանի կողմից Ղրիմի 2014 թվականի բռնակցման և 2022 թվականի Ուկրաինայի դեմ լայնածավալ ներխուժման վերաբերյալ: Մինչ Ուկրաինան ձգտում է ավելի սերտ կապեր ստեղծել ԵՄ-ի հետ, Վրաստանը, «Վրացական երազանք» կուսակցության իշխանության ներքո, ընդհակառակը՝ ավելի ու ավելի է մերձենում Ռուսաստանի և Չինաստանի կառավարությունների հետ:
• Չինաստանը նպաստել է երկակի կիրառման վերահսկողության տեխնոլոգիաների տարածմանը տարածաշրջանում: Ազգային կառավարությունների կողմից քաղաքական ընդդիմախոսների կամ քաղաքացիական ակտիվիստների դեմ այս տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունը լուրջ վտանգ է ներկայացնում քաղաքական և քաղաքացիական իրավունքների համար, ինչպես դա կարելի է դիտարկել Վրաստանում 2024 թվականի ընտրություններից հետո:
• Չինաստանը ԵՄ արևելյան հարևանության երկրներում օգտագործում է փափուկ ուժ՝ ընդլայնելով իր լրատվամիջոցների ներկայությունը և խորացնելով համագործակցությունը կրթության ոլորտում (կրթաթոշակների տրամադրում, Կոնֆուցիուսի ինստիտուտների հիմնում), ինչը թույլ է տալիս Պեկինին առաջ մղել չինաստանամետ նարատիվներ և մտահոգություն է առաջացնում միակողմանի խոսույթի տարածման, ինչպես նաև ակադեմիական ազատության հնարավոր ռիսկերի առնչությամբ:

Քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

- ԵՄ-ն պետք է շարունակի առաջնահերթություն տալ հակակոռուպցիոն ջանքերին, նպաստի օրենքի գերակայության և դատական անկախության ամրապնդմանը, ապահովի մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև շարունակի աջակցել ուժեղ հաշվետու ինստիտուտների ձևավորմանը՝ կառավարման ռիսկերը նվազեցնելու և անձի իրավունքները պաշտպանելու համար: Սա հնարավորություն կտա այս երկրներին պաշտպանվելու և նվազեցնելու Չինաստանի ազդեցությունը, որի համար նպաստավոր պայմաններ են ստեղծում կոռուպցիան, թափանցիկության պակասը և վերահսկողության տեխնոլոգիաների տարածումը:
- ԵՄ-ն պետք է լիարժեք օգտագործի ընդլայնման գործընթացի շրջանակում արդեն իսկ առկա գործիքները՝ բարեփոխումները խթանելու նպատակով, հատկապես Չինաստանի ներդրումային կարողությունների անկման և չիրականացված տնտեսական խոստումների համատեքստում: Սա առանձնապես արդիական է Վրաստանում ժողովրդավարական հետընթացի և կառավարության՝ Չինաստանի հետ կապերի ակտիվ ընդլայնման պայմաններում: Միևնույն ժամանակ ԵՄ-ն պետք է ընդունի, որ տարածաշրջանի բազմաթիվ երկրներ Չինաստանը դիտարկում են որպես այլընտրանքային գործընկեր:
- Հաշվի առնելով, որ ԵՄ արևելյան հարևանության երկրները շարունակաբար ձգտում են չինական տնտեսական ներդրումների, ԵՄ-ն պետք է նվազեցնի հնարավոր ռիսկերը՝ մշակելով և արդյունավետորեն տարածելով միասնական ռազմավարություն՝ ազգային ռազմավարական ենթակառուցվածքներում, ինչպես նաև կարևոր և զգայուն ոլորտներում Չինաստանի ներգրավվածության վերաբերյալ:
- Չինական մատակարարներից կախվածությունը կանխելու և սահմանափակելու նպատակով ԵՄ-ն պետք է ուժեղացնի համակարգումը տեղեկատվության փոխանակման ոլորտներում, աջակցի ստուգման մեխանիզմներին և կրճատի Չինաստանի ներգրավվածությունը ռազմավարական ոլորտներում, ինչպիսին է, օրինակ, հեռահաղորդակցությունը: Ուկրաինայի դեպքում սա ենթադրում է լրացուցիչ ֆինանսական աջակցություն՝ պատերազմի հետևանքով վնասված ենթակառուցվածքների վերականգնման համար:
- ԵՄ-ն պետք է ներգրավի տեղական լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը, քաղաքացիներին և էլիտաներին՝ տարածաշրջանում Չինաստանին հակազդելու համար՝ ավելի արդյունավետ ներկայացնելով իր ներդրումները Արևելյան հարևանության երկրների զարգացման գործում: Միևնույն ժամանակ ԵՄ-ն պետք է շարունակի առաջ մղել ժողովրդավարական արժեքները, օրինակ՝ հանրային դիվանագիտության միջոցով, ձևավորելով և տարածելով դրական նարատիվներ, ներառյալ իր ապագայի վերաբերյալ տեսլականը, որը ենթադրում է ավելի ուժեղ և սերտ գործընկերություն հարևանության երկրների հետ:
- Վերջապես, ԵՄ-ն պետք է խթանի տարածաշրջանում Չինաստանի դերի վերաբերյալ քննադատական վերլուծությունն ու հանրային բանավեճը՝ աջակցելով անկախ լրատվամիջոցներին և լրագրությանը:

Ամբողջական հետազոտությունը՝ **ՌԵԴԵՄՈՍ-ի քաղաքականության փաստաթուղթ. Չինաստանի դերը ԵՄ արևելյան հարևանության երկրների քաղաքական փոխակերպումներում,** հասանելի է հետևյալ հղումով՝ https://redemos.eu/resources/publications/policy-papers/

REDEMOS: REconfiguring EU DEMOcracy Support.
Towards a sustained demos in the EU's Eastern Neighbourhood

REDEMOS- 101061738
HORIZON-CL2-2021-DEMOCRACY-01-04

Dr Mădălina Dobrescu, NTNU
info@redemos.eu

redemos.eu @REDEMOS_eu REDEMOS Horizon Europe Project